

Ե՞րբ սահայն եղաւ ան «զլուխ ազգին քրանկաց եւ եկն ի վերայ թուրքին», Հապէշխտան ուղեւորութենէն՝ այսինքն 1678—1680էն առաջ թէ վերջը:

Քանի մը նշաններ կը մղեն մեզ կարծելու, թէ այդ արկածախնդրական ձեռնարկը կրնայ կատարւած ըլլալ առաջ, այսինքն 1670—1678ի միջոցին, վասնզի իր Ուղեգրութեան մէջ տեղ մը (տես տող 139) կը կատարէ բաղդատութիւն մը, որ կարծել կու տայ թէ Հապէշխտան երթալէ առաջ արդէն Եւրոպա գտնուած է («կայ ծառ մի մեծ որ բարձր է քան զանկակասումն Փիզալու»): Յովհաննէս Թիւթիւնճիի, ուրեմն, նախ քան Հապէշխտան երթալը, ծանօթ էր Փիզալի աշտարակին:

Իր գործի վերջաւորութեան (տող 216 - 233) կարծես ընտանութիւն մը ցոյց կու տայ իտալիոյ հանդէպ, երբ կ'ըսէ. «ի Մորու ծովով եկաք ի Ալիկոնայ երկիրս Գրանսուզին զոր Տէր Ասուած անփորձ եւ երկար կեանք պայծառ պանեպե, ի պարծաւս ամեցայ: Քրիստոնէից եւ ի գթութիւնս ցառապեալ Հայոց ազգին պանդխտելոց»:

Դժբախտաբար կարելի չէ որոշ և վճռական ըլլալ, վասնզի հակառակն ալ կարելի է պնդել, քանի որ 1683ին զինքը Ծրանսա կը գտնենք, համաձայն Բաղիշեցի մահտեսի Շահմուրատի օրագրութեան, զոր Գրիգոր Յ. Ա. Մամիկոնեան դտած, ընդօրինած և հրատարակած է Գարրիէլ Ա. քհն. Պատկանեանի Արարաց հանդէսին մէջ (Ա. տարի, թ. 7, 1850 Հոկտ. 21): Այս յիշատակարանը Հ. Գ. Զարբհանէլեան 1895ին օգտագործած է իր Վենետիկ հրատարակած «Ասուսնապիւրութիւնք հայ լեզուի եւ մասեմագրութեան յԱրեւմուտս» գործին մէջ (էջ 204—205): Զայն հրատարա-